ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՎԵՏԵՐԱՆ-ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ

10.05.2019 16:36

ՀՀ փաստաբանների պալատում, ավանդույթի համաձայն, արդեն հինգերորդ տարին է, ինչ հյուրընկալվում են Հայրենական պատերազմի մասնակից-փաստաբանները:

Հայաստանի փաստաբանների պալատի անդամներ Նարիման Միրզաբեկյանը, Հրաչիկ Գոգինյանը և Մայիս Ավետիսյանը Երկրորդ աշխարհամարտի տարբեր ռազմաճակատներում իրենց ավանդն են ներդրել ԽՍՀՄ տարած հաղթանակում:

Ցավոք օրեր առաջ նրանցից տարիքով ավագը՝ Նարիման Միրզաբեկյանը, հեռացավ կյանքից: Այսօր՝ մայիսի 10-ին, Հրաչիկ Գոգինյանին և Մայիս Ավետիսյանին ընդունել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը: Պալատի նախագահը շնորհավորել է վետերան-փաստաբաններին մայիսյան եռատոնի կապակցությամբ:

Հանդիպման ավարտին վետերաններին նվիրվել է Սասունցի Դավիթ արծաթե հուշադրամներ, ինչպես նաև անվանական գինիներ:



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })